

պէտք է մի և նոյն ժամանակ խոստովա-
նել որ բնագրի ունեցածն եւս մի ամբող-
ջական իմաստ պարունակում է. « Չղի-
մեն ... գհեշտ պաշտաման տենչիւ » այս-
ինքն Գրիգոր ղիմում է առ Տրդատ՝ « հեշտ
ծառայութեան տենչէն մղուած » : Ըստ
ըրիտոսական սկզբանց՝ տէրն զծառայն
պիտի ընդունի իբրեւ եղբայր, իսկ ծա-
ռայն պիտի պատուէ ոչ իբրեւ սոսկ մարդ
այլ իբրեւ զՏէրն. ըստ այնմ « որք միան-
գամ ընդ լծով ծառայութեան մտանէք,
գիւրաքանչիւր տեսարս պատուոյ արժանի
համարեալիք » : Ըստ այսմ Գրիգորի ծա-
ռայութիւնը, հօրը պարտքը հատուցանելու
համար վսեմ մտածութիւն կը նկատուի
և հնչտ պաշտօն:

Այժմ դառնանք ընկելու առաջադրուած
ընթերցումը և Չղիմենն առ նա սրբոյն
Գրիգորի, զն(րած)նչտ պաշտաման, զտան-
ջիւ, զնահատակութիւն սրբոյն » :

Ազաթանգեղոս սկսած էջ 45 « Յառա-
ջին ամին Տրդատայ մինչև էջ 57
« Եւ ետ կապել (Չղիգոր) ». նկարագրում
է այն երկար հակաճառութիւնը որ տեղի
ունեցաւ Տրդատայ և Գրիգորի միջև յից
պաշտօն չմատուցանելուն համար: Արդ այս
գեղեցիկ դրուագի յիշատակութիւնը պա-
կասում է Փարպեցու մօտ. յետ կարդա-
լու « Չղիմենն առ նա սրբոյն Գրիգորի »
բնականաբար կը սպասուի որ ասէ. « գիրս-
ծարնէ պաշտօնատար լինելոյ յիցն, զնա-
հատակութիւն սրբոյն » : Ուրեմն առաջա-
դրուած ուղղագրութիւնը տրամաբանական
է և յեցած պատմագրի նկարագրութեան
վերայ : Որովհետեւ Տրդատ այնքան ար-
դարասէր չի երեւիր դէպ ի Գրիգոր նրա
հնչտ պաշտօնը միամտութեամբ կատարե-
լուն, որքան չարսնում է նրա հրամշտի
համար (էջ 108. տող 2) հակառակելով
իւր հրամանին և կոոց ընծայ և պաշտօն
չմատուցանելով. այդ բանը երկկիցս շեշ-
տուում է. « Այլ նա ոչ առնոյր յանձն
պաշտօնատար լինել յիցն երկրպագութեան »
(էջ 46. տող 2), և դարձեալ « Եթէ ոչ
առնուա յանձն յիցն պաշտօն մատուցանել » :
Հետեւապէս Փարպեցին աչքը պահելով

Ազաթանգեղի բնագրին պիտի գրէր. « Չղի-
մենն առ նա սրբոյն Գրիգորի, գիրամիչտ
պաշտաման յիցն, զնահատակութիւն սր-
բոյն » : (Հմտ. զհրամեշտ պաշտօնատար
լինելոյ յիցն, կամ զհրամարին ի պաշ-
տամանէ յիցն) :

Ըստ մեզ կիսատ թուի միայն գրել
« զհրամեշտ պաշտաման » առանց իւր
բացայայտչին յիցն, որ փոխանակելու
է անպատճառ « զտանջիւ »ին որովհետեւ
նահատակորինն իբրեւ մեծագոյն պարու-
նակում է յինքեան ամեն տեսակ տան-
լանքներ. ուստի բնաւ կարիք չկայ զտան-
ջին կանխել գրել քան « զնահատակու-
թիւն սրբոյն » :

Հ. ԳԱՐՐԻԷՆ ԿԱՆԱԳՅԱՆԱՆ



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՒ ՊԱՇՏՕ-
ՆԵԱՆԵՐԸ

Երբ անձ մը կաթողիկոս կ'ընտրուէր՝
թէ ըլլա՞ր իսկ թեմական եպիսկոպոս՝ պէտք
էր ձգել թեմը և գալ կաթողիկոսանիստ
քաղաքը բնակիլու. և նա իրեն նախոր-
դաց բնակարանը կը նստէր, զոր նախնիք
կարողիկոսարան կը կոչեն, նոյնպէս երբեմն
Հայրապետանոց¹, և այլն :

Խորենացին որ բնաւ կարողիկոս անունը
չի տար մեր եկեղեցական զիւրոյն՝ սա դէպ-
քին մէջ անոր ածանցեալը կը գործածէ.
Պարսից վրաս թագաւորը կը հրամայէ
առնուլ Արտաշէրէն Հայոց թագաւորու-
թիւնը « և զամենայն ինչս ազգի նորա
ունել յարքունիս. նոյնպէս և զմեծն Սա-

1. Բուզանդ (Գր. Գ. 91. ժթ.) Եպիսկոպոսանոց
մը կը յիշէ Աշտիշատի մէջ. ուր կայձակնաւոր կը մեռ-
նին Աթանգեղնէս և Պայ՝ Բուսկան որդիքը : Կաթողի-
կոսական աթոռը Աշտիշատի մէջ համարելով՝ Եպիսկո-
պոսանոցը Հայրապետանոց կամ Կաթողիկոսարան կը
համարիմ, ինչպէս Եպիսկոպոս = Կաթողիկոս :

հակ, և զտոմն Կարողիկոսական ունել յար-
քունիս. (Խորենացի Գ. կդ) : Հոս պատ-
միչը Տոն Կարողիկոսական ըսելով կը հաս-
կընայ կաթողիկոսին բնակարանը և անոր
ստացուածքները :

Սերէոսի և Յովհաննէս պատմաբանի
քով կը գտնենք կաթողիկոսարանի համա-
նօտ նկարագրութիւն մը : Ներսէս Գ Շի-
նող Վաղարշապատի ճանապարհին վրայ
կաթողիկոսարան մը կը շինէ. « Յայնմ ժա-
մանակի արկ ի միտս իւր կաթողիկոսն
Հայոց Ներսէս շինել իչք յնկարչիւն մերձ
առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշա-
պատ քաղաքին ի վերայ ճանապարհին՝ յու-
րում ասին ընդ առաջ եղև թագաւորն
Տրդատ՝ սրբոյն Գրիգորի : Շինեաց և անդ
եկեղեցի մի յանուն երկնաւոր Չուարթ-
նոցն ... Աժ Չուր և երեք զգետոյ և արկ
ի գործ զամենայն վայրսն առապար, տըն-
կեաց այգիս և ծառատունկս, և շուրջա-
նակի պատուարեաց զբնակութեամբ զե-
ղեցկաղիբ յօրինուածով, բարձր պարսպաւ
ի փառս Աստուծոյ » . (էջ 118-9) : Եւ
Յովհ. պատմաբանը սոյն կաթողիկոսա-
րանը այսպէս կը նկարագրէ. « Հաստա-
հեղոյս կոփածոյ քարամբք . այլ և կար-
գեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս
երդումարդոց ըստ պայմանի քաղաքակա-
նաց . և ածեալ Չուր ի Քասաղ գետոյ՝
զամենայն աւազախիւր դաշտավայրն ի գործ
արկանէր, տնկէր այգիս և բուրաստանս
ժողկոցաց » :

Կաթողիկոսարանը հաւասար էր թագա-
ւորական պալատին իր մեծութեամբ և
նոխութեամբ. « Աչր նուաստ, կը գրէ Մ.
Ուռայեցիին , աթոռ Հայրապետութեան
քան զթագաւորութեանն Հայոց » (Մ. Ուռ.
ՉԹ) այնպէս որ Յունաց կոստանդին կայսրը
երբ Արարատ նահանգը կու գայ՝ « Եր-
թեալ ի Գըլին նստաւ ի Տան Կարողիկոսա-
րանին » Ներսէս Շինողի օրով (Սերէոս,
էջ 140) :

Կաթողիկոսարանը միայն հայրապետին

բնակութեան համար սահմանուած չէր ,
հոն պէտք էին բնակիլ այն անձինքը՝ ու-
րոնք կաթողիկոսարանին պաշտօններով
զբաղած էին, ինչպէս եպիսկոպոսներ, ներ-
քին ժողովոց անդամներ, վարդապետներ,
Քուզանդ Մեծն Ներսիսի խորհրդակից և
գործակից տասնեւերկու եպիսկոպոս կը
յիշէ. « Էին ի ներքին Հայրապետին ի Տան
իչրում ընդ նորա ձեռամբ երկոտասան ե-
պիսկոպոսք, աթոռակիցք իւր, գործակիցք
և խորհրդակիցք : Թո՞ղ զայլոց գաւառաց
ամենայն եպիսկոպոսեանն որ ընդ նովաւ »
(Քուզանդ զպր. Չ. զլ. Ե) :

Նոյնպէս Մատթէոս Ուռայեցիին (ՉԹ)
կը գրէ. « Յորժամ էր տէր Պետրոս յա-
թոռ Հայրապետութեանն և ի Հայաստան
աշխարհին , ունէր կազմութիւն Հայրե-
նեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց հինգ
հարիւր զից անուանին և մեծանիք և շա-
հաւէտ ընտիր ընտիր, նոյնպէս և եպիսկո-
պոսք հինգ հարիւր փառաւորք, և գաւա-
ռատեսուչս ի վերայ հինգ հարիւր թեմի
հանապազ, երկոտասան եպիսկոպոսք և չորս
վարդապետք ի տան հայրապետին անպա-
կաս լինէր, և վաթսուն երէց և կրօնա-
ւորաց, և յաշխարհականաց հինգ հարիւր »
(ՉԹ. էջ 184) : Եւ Արիստ. Հաստիվերացիին
մի քանի երեւելի վարդապետներ կը յիշէ.
« Եւ էին յայնմ ժամանակի վարդապետք՝
Սարգիս և Տիրան անուն և Յենովք, որ
Կարողիկոսարանին էին վարդապետք » (էջ
13) :

Իաց ի այդ երկոտասան եպիսկոպոս-
ներէն կային ուրիշ այլ և այլ եկեղեցա-
կան պաշտօնեայններ՝ որոնք կաթողիկոսա-
րանին մէջ իրենց յատուկ պաշտօններն
ունէին, ինչպէս Տեղապան կամ Արտակից,
որոնք ի հարկին կաթողիկոսական գոր-
ծերը կը կատարէին նոյն բնակարանին
մէջ մնալով :

Մեծն Ներսէս իրեն Արտակից ընտրած
էր զԺառ (Քուզանդ Գ. ԺԵ) և երբ ինքը
Պոլիս գնաց՝ զայն Տեղապան անուանեց.
« Եթող զսա (զԺառ) իւր փոխանակ ետե-
ղապան » (Քուզանդ Գ. ԺԲ) :

Կը յիշուին նաև Գրան եպիսկոպոս

1. Սերէոս , զլ. 1Գ. էջ 118-9 .


(Յովզ. պատմարան) որոնք զլիսաւոր պաշտօն մ'ունէին կաթողիկոսարանին մէջ . « Ստեփանոս եպիսկոպոս Դրան կաթողիկոսարանին » ինչպէս կը ստորագրէ իր անունը թէ՛ Սոյ (1807ի) և թէ՛ Առանայի (1816ի) ժողովներուն մէջ¹ : Մետասանեւորորդ դարու մէջ յետ Սարգսի « Երամանաւ նորա նստուցանեն յաթոռ կաթողիկոսութեան Հայոց զտէր թէ՛նդորոս՝ գիրան եպիսկոպոս տեան Սարգսի Հայոց կաթողիկոսի (Մ. Ուռհայեցի ճժԺԵ) : Թե՛րեւս նոյն պաշտօնը ունէին նաեւ Դրան վարդապետ և Դրան Սարկասոց կարողկոսարանի, ինչպէս որ կը յիշուի նոյն 1807ի Սոյ ժողովոյն մէջ . « Մարտիրոս վարդապետ Դրան կարողկոսարանին » . 1173ի յիշատակարանի մը մէջ կը յիշուի « արդեւնական վարդապետն Ստեփանոս՝ որ Դրան Սարկասոց էր տեան Երեսիսի Հայրապետի » և այս յիշատակագրէս կը հետեւցուի որ Դրան Սարկասոցը պաշտօնին անունն է և ոչ թէ աստիճանին, վասն զի Ստեփանոսը՝ միանգամայն վարդապետ է, որ քահանայական աստիճանը ունեցած պէտք է ըլլայ : Ինչպէս թագաւորները սեւեակապետ ունէին՝ այսպէս նաեւ կաթողիկոսները, որոնք եկեղեցական անձինքներէն պէտք էին ըլլալ : Անաստաս որ Երեսիս Գ.ի յաջորդեց « էր Աննկապետ Երեսիսի » (Ասողիկ, էջ 99) » :

Փակակալը կաթողիկոսարանի եկեղեցւանն էր . Եզր դեռ կաթողիկոս չընտրուած՝ էր Փակակալ սրբոյն Գրիգորի (Յովզ. կաթող. և ասորմէ վերջը այդ պաշտօնը Յովհան Մայրազամեցին առաւ, ինչպէս կը գրէ Ասողիկ թէ՛ Եզրը Հերակլին գնաց « ոչ տանելով ընդ իւր զՅովհան Փակակալ սրբոյն Գրիգորի » (Ասողիկ, էջ 87), և վերոյիշեալ յիշատակարանին մէջ յետ յիշել ինչորեւոր զՍտեփանոս որ « Դրան Սարկասոց էր տեան Երեսիսի Հայրա-

պետի » կ'աւելցնէ իսկոյն « և զՅակոբ և կեղեցպաւ », սա ալ թերեւս պաշտօնակից էր Ստեփանոսի Դրան Սարկասոցին, փակակալ ըլլալով կաթողիկոսարանի եկեղեցւոյն :

Կային դեռ ուրիշ պաշտօնատէրներ, ինչպէս Դարապետ կաթողիկոսի (Մ. Ուռհայեցի), Հիւրատես կաթողիկոսարանի (Արիսա . Լաստիվերոցի գլ . Ժ . էջ 48) և Սարկասոցապետ կաթողիկոսի և դեռ ուրիշներ որոնք յանուանէ չեն յիշատակուած մեր պատմչաց քով² :

Հ. Մ. ՊՈՏՈՒՅԵԱՆ



ՁԵՆՏ ՊԱՇՏԱՄԱՆ ՏԵՆՉԻ

Առ Յ. Գ. ՆԱՏԱԿԵՏԻՍ

Փարպեցոյ (էջ 2, տող 37) հետեւեալ խօսքը « Ձրիմել մա Սրբոյմ Գրիգորի, զհէտ պաշտաման տենչի զճանատակութիւն սրբոյն » ուղղագրած է ինք « զհեաժեշ պաշտաման, զտամջիլ » և այլմ . չաւան էք այս ուղղագրութեան, միայն « տենչիլ » ը սրբագրելով « զիցց » (զիցց պաշտաման զիցց) . Սակայն Փարպեցիմ կը թուի ուղղակի ակնարկել Ազաթամզեղոսի հետեւեալ տեղիմ . « Ել և զճաց առ Տրդատիոս բոտ հեշ պաշտաման, թարցամեր գամծմ » (էջ 42) :

Բայց Ազաթամզեղոսի այս տեղմ ալ անճանկամալի է և անհրճեշտ է ուղղագրիլ զայմ այսպէս . « Ել և զճաց (Գրիգոր) առ Տրդատիոս զհեա պաշտաման » (ծառայութիւն գտնելու, հմմտ. երթալ զիցտ արդարութեան, և այլմ) :

Յիրաւի Փարպեցոյ ըմթիցցուածը՝ « Ձրիմել մա մա զհեշտ պաշտաման » ցոյց կու տայ որ Ե. դարու Ազաթամզեղոսի մէջ՝ բոտ չկար այլ էր « Ջհեա պաշտաման » զոր ըմթիցցնակողմերէմ ոմամ « Ձիւնտ » կարճացած է իմ : — Ազաթամզեղոսյ զաղափարողք երկու շաւղով ըմթացած են, երկու տեսակ ուղղագրութիւն կատարած . ոմամք « Ջհեա պաշտաման » ըր փոխած են Ըտ հեշտ պաշտամանի անմաստ՝ բայց ցերեկամորէմ զէթ աւելի կամոմաւոր (հմմտ. Բուզ. էջ 85 « ըստ հետ կամաց » զոր կ'ուղղէք « զիցտ կամաց » . կ'իւրիւր բոտի սղագրութեան ծես մը կար՝ « Ջ » ի մտանող) . իսկ շագար Փարպեցիմ՝ իր ձեռագրիմ մէջ պակաս մ'ենթագրելով՝ տենչի բառն անցնուցած է :

Հ. Կ. Տ. ՍԱՆԱԿԵԱՆ

1. Հանեմտէ Զամէ. Պատմ. Հայց հո. Գ. Ա դեքս. Վ. Պաշեանի Պատմ. կաթողիկէ վարդապետ. Վիեննա 1875 . յէջ 275, 281, 297 .

2. Հմմտ. Ինքիճեան Հ. Ղուկաս, Հնախօտութիւն հո. Գ. էջ 274 .